

խուսափէր այնպիսի գրաբարաբանութիւններից, ինչպէս է.  
«Խորհել պարտենք», «այդունակ», և այլն:

## Ճ. Յ.

Յարարիւն Եսայեան. «Միեւնոյն դագաղում» պատկեր, 16 երես. Թիֆ-  
լիս, 1905, գ. 4 կ.:

«Միեւնոյն դագաղում»-ը՝ մի յաջողուած պատկեր է կով-  
կասեան վերջին դառն իրականութիւնից:

Խնձ առանձնապէս դուր է գալիս պատկերի մույլացումը  
(զամաւը), որ իրաւունք է տալիս ասելու, թէ պ. Եսայեանի  
մէջ սկսում է արտայայտուել բելեւտիստի ձիրք:

Կատարումը նոյնպէս վաս չէ, բայց այդ կողմից՝ պատ-  
կերի արժանաւորութիւնները աւելի բացասական արժանաւո-  
րութիւններ են: Պատկերը ազատ է խոշոր պակասութիւններից:  
Աչքի է ընկնում մանաւանդ այն պակասութիւնների բացակայու-  
թիւնը, որոնք մատնանիշ արուեցին պ. Եսայեանի առաջն  
պատկերները քննադատողների կողմից:

Պատկերի ոճը ամփոփ է և լեզուն՝ իսկական հայերէն,  
որ ամենավին չի յիշեցնում պ. Եսայեանի թարգմանական հայ-  
երէնը կլարա ծետկինի գրքում:

## Ճ. Յ.

Փառնակիս. «Զօւռողի մալը ութողին հալալ առ կամ ռձարպիկ փաս-  
տարան» վուրպիլ մէկ արտարուածով. Երևան 1905 թ. 58 եր. գ. 40 կ.

Բագուեցի երիտասարդ Սարգիս Օձխուզողեանը շանտաժի  
միջոց է դարձնում Սինոդի վեջին կարգադրութիւնը. նրա նշա-  
նածի, օրիորդ Զարուհու հայրը, Թորոս Ասլանեանը, տասը  
հաղար բուրլու օժիտ է խոստացել: Այդ քիչ է թւում յարգելի  
երիտասարդին: Նա այնպէս է ձևացնում, թէ մտազիր է հրա-  
ժարուել օրիորդ Զարուհուց, որովհետեւ, ինչպէս լիել է, օրի-  
որդի հայրը բարակացաւ ունի, իսկ մայրը՝ լուսնոտ է: Կաս-  
կածները փարատելու համար՝ պահանջում է բժշկական քննու-  
թեան ենթարկել օրիորդին և նրա ծնողներին: Ասլանեանները  
դայրացած են: Երիտասարդը յայտնում է, որ կարելի է բանը  
բժշկական քննութեան չհասցնել, սակայն այն պայմանով,  
որ Ասլանեանները օրիորդի օժիտի վրայ մի հինգ հազար էլ  
աւելացնեն, օրիորդի ապագայ բժշկութեան համար:

Միջամտում է Փիլիպպոս Կիկերոնեանը, ճարպիկ փաստաբանը: Նա հաստացնում է ազան փեսացուին, թէ սրա, նշանածի ծնողները արդէն բժշկից վկայական են ստացել, թէ բոլորովին առողջ են, և իրան, փաստաբանին, յանձնել են դատսկսել փեսացուի դէմ և մեղադրել նրան իբրև զրպարտչի: Փեսացուն թակարդ ընկած է զգում իրան և սկսում է բանակցութիւններ հաշտութեան մասին, բայց, Վիտտէի տաղանդից զուրկ լինելով, յաջողութիւն չի ունենում, մերժումն է ստանում, ստիպում է հազար ըռուբլու փոխանակագիր ստորագրել յօդուտ մի անօժիտ օրիորդի, որպէսզի իր դէմ զրպարտութեան դատ չսկսեն և վերջիվերջոյ վոնդւում է, մօտիկ ծանօթութիւն կապելով տանտիրոջ ծառայի բռունցքների հետ: Իսկ օրիորդ Զարուհին նշանուում է փաստաբանի հետ:

Վօդը վիլլ թեթև է կարգացւում և թեթև կը նայուի ու թերեւս բաւականութիւն պատճառի գաւառական սակաւապահանջ հանդիսատեսներին:

Մի քանի թեթև նկատողութիւններ:

Խնչքան էլ մեծ լինի վօդը վիլլ գրողների ազատութեան ասպարէզը, այնուամենայնիւ հաւանականութեան օրէնքը և ճշտութիւնը գոնէ նուազագոյն չափով պարտադիրներ են նրանց համար:

Ոչ մի փաստաբան մէկի մասէն բերանացի անսպատուարեր լուր տարածելը դիֆֆամացիա չի անուանիլ և լուր տարածողին 5555-րդ յօտուածով չի սպառնալ, որովհետև սուսաց օրէնքով դիֆֆամացիա կարող է տեղի ունենալ միմիայն տպագրական խօսքի միջոցով իսկ 5555-րդ յօտուած գոյութիւն չունի:

Բայց այդ նկատողութիւնը մանրամասնութեան է վերաբերում: Աւելի էական է այն, որ երբ փաստաբանի սպառնավերից յետոյ փեսացուն խնդրում է մոռացութեան տալ եղածը, փաստաբանը յայտնում է, որ այդ անկարելի է, որովհետև օրիորդ Զարուհու նշանածը այժմ ինքն է, և այդպէս էլ լինում է: Կարծէք թէ նշանած ընտրելը և փեսացուին փոխելը այնպիսի գործողութիւն է, ինչպէս ձեռնոցներ ընտրելն ու փոխելը:

Սակայն այդ պակասութիւնը հեշտ է վերացնել: Բաւական է մտցնել վօդը վիլի մէջ մի տեսաբան, որի բովանդակութիւնը կարող էր մօտաւորապէս այս լինել, —օրիորդ Զարուհին հիասթափուել է փեսացուից և զղջում է, որ մերժել է իր մանկութեան բարեկամ և իրան սիրող Կեկերոնեանի առաջարկութիւնը. տեղի է ունենում բացատրութիւն, որի մէջ կարող էր դեր խաղալ մօլիէրեան մի աղախին, և նրանք վճռում

են խաղալ Օձխուզողիամնի գլխին այն խաղը, ինչ որ խաղում է վօդըվիրում Կիկերոնեանը:

Տ. Յ.

### ՆՈՐ ՄԱՏԵՆԱԽ ԳՐՔԵՐ

- 1) Կոմ Լ. Ն. Տօլստոյի «Երկերի ժողովածու. № 1. Կրէյցերի Սօնատը, վերջաբանը, Կանանց և Սէր». թարմանեց Ե. Ճ. Մուրադեան, Վաղարշապատ, 1905 թ., գ. 60 կ.:
- 2) Ճամբորդ՝ «Գեղեցիկը», Թիֆլիս, 1905 թ., գ. 10 կ.:
- 3) Ժ. Մսածն՝ «Նապաստակ Խէշանի վրէժինդրութիւնը կամ ինքդ քեզ օգնիր», զրոյց, պատկերազարդ, Փրանս. փոխ. Լ. Մ.-Աղամեան, Թիֆլիս, 1905 թ., գ. 75 կ.:
4. Կոտ-Մուռլիկա՝ «Փոքրիկ Ցուակն ու խլըշիկ նապաստակը, զրոյց պատկերազարդ. փոխադրեց Լ. Մ.-Աղամեան, Թիֆլիս 1905 թ., գ. 1 ր.:
- 5) Մ. Սեմենկա՝ «Առաջին վաստակ», զրոյց պատկերազարդ, փոխադրեց Լ. Մ.-Աղամեանց, Թիֆլիս, 1905 թ., գ. 60 կ.:
- 6) Վիկտորիա՝ Սարգու, «Ոգեհարցութիւն» (Spiritusme), թատրոն. երեք արարուածով, թարգմ. Լ. Մ.-Աղամեանց, Թիֆլիս, 1905 թ., գ. 50 կ.:
- 7) Բժ. Վ. Արծրունի՝ «Մանկիկ», առաջին մաս, նկարներով, 1905, թ., Թիֆլիս, գ. 40 կ.:
- 8) Բելօկօնսկի՝ «Դնդնավարութիւն և զէմստվօ», թարգմ. Յ. Թադէսոսեանց, Թիֆլիս, 1905 թ., գ. 10 կ.:
- 9) Ե. Ֆրանգեան՝ «Արդպատական», պատկերազարդ, Թիֆլիս, 1905 թ., գ. 1 ր. 50 կ.:
- 10) Մ. Տ. Շւոտ՝ «Թրդերը Տաճկաց-Հայաստանում (ազգագրական նիւթեր), հատոր Ա., Մ.-Պետ. 1905 թ., գ. 75 կ.:
- 11) Մ. Տ. Շւոտ՝ «Հնչակ», Մ.-Պետ. 1905 թ. գ. 10 կ.:
- 12) Մ. Տ. Շւոտ՝ «Արամը», Մ.-Պ. 1905 թ., գ. 25 կ.:
- 13) Կ. Ցետկին՝ «Կինը և նրա տնտեսական դրութիւնը», թ. ո. Յ. Ես., Թիֆ., 1905 թ., գ. 15 կ.: